Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 26 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի եւ Ռ.Պապայանի, քննության առնելով << քաղաքացի Ռուբեն Թորոսյանի կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Քաղ. Ռուբեն Թորոսյանը դիմել է Սահմանադրական դատարան՝ (11.02.2009թ. մտից թիվ 4-46) վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 14 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթի սահմանադրականությունը:

Դիմումատուն «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 27 հոդվածի 3-րդ մասի պահանջին համապատասխան չի վճարել պետական տուրք՝ միջնորդելով ազատել իրեն այդ պարտականությունից՝ «Պետական տուրքի մասին» << օրենքի 22 հոդվածի «է» կետի հիմքով, որը սույն դիմումի շրջանակներում կիրառելի չէ (տե՛ս 2-րդ դատական կազմի՝ 16.02.2009թ. 10.02.2009թ. մտից թիվ 4-44 դիմումի ընդունելիության կապակցությամբ որոշումը):

2. «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 69 հոդվածի 1-ին մասի համաձայն անհատական դիմում կարող է ներկայացվել սահմանադրական դատարան, եթե դիմումատուն հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է << Սահմանադրությանը:

Տվյալ դեպքում, «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի վերոհիշյալ որեւէ պահանջ չի կատարվել դիմումատուի կողմից: Բացի այդ, դիմումում մատնանշված՝ **«07.01.09թ.»**-ին << Սահմանադրական դատարանն որեւէ գործ չի ընդունել քննության:

3. Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 27, 69 հոդվածներով, սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 3-րդ մասով, սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

Քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի քննության ընդունումը մերժել՝ չբավարարելով պետական տուրք վճարելուց ազատելու վերաբերյալ նրա միջնորդությունը:

Նախագահող՝ Հ.Նազարյան

Անդամներ՝ Հ.Դանիելյան

Ռ.Պապայան